

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 160

ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵԻԵՐՆ ՈՒ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 105-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Սահմանել, որ մաքսային արժեքի հայտարարագիրը լրացվում է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով կամ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) ապրանքների մասով՝ հետեւյալ դեպքերում՝

եթե ապրանքների մասով վճարվում են մաքսատուրքեր, հարկեր, Օրենսգրքի 37-րդ հոդվածում նշված իմաստով ապրանքները վաճառողի եւ գնորդի միջեւ առկա է փոխկապակցվածություն, եւ ապրանքների մաքսային արժեքը որոշվել է ըստ ներմուծվող ապրանքներով գործարքի արժեքի մեթոդով (1-ին մեթոդ).

եթե ապրանքների մասով վճարվում են մաքսատուրքեր, հարկեր, եւ այդ ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին գումարվում են մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման համար լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումներ՝ Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետին համապատասխան.

Եթե կիրառվում է ապրանքների մաքսային արժեքը հետաձգված կարգով որոշելու ընթացակարգը.

Եթե ապրանքների հայտարարագրում հայտագրված՝ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններում կատարվում են փոփոխություններ (լրացումներ)՝ բացառությամբ նշված տեղեկություններում փոփոխությունների (լրացումների) կատարման՝ կապված բացառապես տեխնիկական սխալների (վրիպակների, թվաբանական սխալների, այդ թվում՝ արժույթի փոխարժեքի սխալ կիրառման պատճառով) հայտնաբերման հետ.

մաքսային մարմնի պահանջով, եթե Օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների մաքսային արժեքի մասով մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմնի կողմից պահանջվել են առետրային, հաշվապահական փաստաթղթեր, այլ փաստաթղթեր եւ (կամ) տեղեկություններ, այդ թվում՝ գրավոր պարզաբանումներ հայտարարատուի նախաձեռնությամբ:

2. Անկախ սույն որոշման 1-ին կետի դրույթներից՝ մաքսային արժեքի հայտարարագիրը չի լրացվում այն դեպքում, երբ Օրենսգրքի 38-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան ապրանքները մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս այդ ապրանքների մաքսային արժեք է համարվում ապրանքների այն մաքսային արժեքը, որը որոշվել է դրանք առաջին անգամ մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս, կամ ապրանքների այն մաքսային արժեքը, որը որոշվել է այդ ապրանքներն առաջին անգամ մաքսային ընթացակարգով ձեւակերպելու ժամանակ ներկայացված ապրանքների հայտարարագրում հայտագրված՝ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելիս:

Անկախ սույն որոշման 1-ին կետի հինգերորդ պարբերության դրույթներից՝ մաքսային արժեքի հայտարարագիրը լրացվում է ապրանքների հայտարարագրում հայտագրված՝ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ

տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու դեպքում՝ կապված բացառապես տեխնիկական սխալների (վրիպակների, թվաբանական սխալների, այդ թվում՝ արժույթի փոխարժեքի սխալ կիրառման պատճառով) հայտնաբերման հետ, եթե ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ մաքսային արժեքի հայտարարագիրը լրացվել է:

3. Հաստատել կցվող՝

մաքսային արժեքի հայտարարագրի ՄԱՀ-1 ձեւը.

մաքսային արժեքի հայտարարագրի ՄԱՀ-2 ձեւը.

մաքսային արժեքի հայտարարագրի լրացման կարգը:

4. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների մասով մաքսային արժեքի հայտարարագրի լրացման դեպքերը, մաքսային արժեքի հայտարարագրի ձեւը, էլեկտրոնային փաստաթղթի տեսքով մաքսային արժեքի հայտարարագրի եւ թղթային կրիչով մաքսային արժեքի հայտարարագրի էլեկտրոնային տարբերակի կառուցվածքն ու ձեւաչափը, դրանց լրացման կարգը սահմանվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությամբ՝ նախքան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից դրանք սահմանելը:

5. Ուժը կորցրած ճանաչել՝

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման, հսկողության եւ ճշգրտման կարգերի մասին» թիվ 376 որոշումը.

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» թիվ 785 որոշումը.

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի «Մաքսային

արժեքի հայտարարագրի եւ մաքսային արժեքի ու մաքսային վճարների ճշգրտման ձեւի էլեկտրոնային պատճենների կառուցվածքների եւ ձեւաչափերի մասին» թիվ 450 եւ 2011 թվականի սեպտեմբերի 23-ի «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» թիվ 785 որոշումներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» թիվ 871 որոշումը.

Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներում կատարվող փոփոխությունների (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի «Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 38 որոշման հավելված) 9-րդ կետի «ա» ենթակետը.

Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներում կատարվող փոփոխությունների (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի «Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 129 որոշման հավելված) 9-րդ կետը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի «Մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարումն ապահովելու չափի հաշվարկի մասին» թիվ 112 որոշման 2-րդ կետը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի մարտի 27-ի «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի մասով մաքսային հսկողության անցկացման առանձնահատկությունների մասին» թիվ 42 որոշման 4-րդ կետի երկրորդ պարբերությունը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հաստատված է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի

2018 թվականի հոկտեմբերի 16-ի

թիվ 160 որոշմամբ

ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են էլեկտրոնային փաստաթղթի տեսքով եւ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով մաքսային արժեքի հայտարարագրի (այսուհետ՝ ՄԱՀ) լրացման կանոնները:

2. ՄԱՀ-ը լրացվում է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, եթե ապրանքների հայտարարագիրը լրացվում է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով, եթե ապրանքների հայտարարագիրը լրացվում է թղթային կրիչով փաստաթղթի տեսքով:

3. Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ը լրացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից սահմանող կառուցվածքին համապատասխան:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 39-րդ հոդվածին համապատասխան ապրանքների մաքսային արժեքը որոշելիս լրացվում է ՄԱՀ-1՝ ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 160 որոշմամբ հաստատված ձեւի:

Օրենսգրքի 41-45-րդ հոդվածներին համապատասխան ապրանքների մաքսային արժեքը որոշելիս լրացվում է ՄԱՀ-2՝ ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 160 որոշմամբ հաստատված ձեւի:

ՄԱՀ-2-ի առաջին հիմնական թերթի ձեւն ընդհանուր (միասնական) է Օրենսգրքի 41-45-րդ հոդվածներով սահմանված՝ ապրանքների մաքսային արժեքը որոշելու բոլոր մեթոդների համար: ՄԱՀ-2-ի երկրորդ հիմնական թերթը լրացվում է ըստ չորս հաստատված ձեւերից մեկի՝ կախված ապրանքների մաքսային արժեքը որոշելու մեթոդից:

ըստ նույնական ապրանքներով գործարքի արժեքի մեթոդը (2-րդ մեթոդ)՝ Օրենսգրքի 41-րդ հոդվածին համապատասխան, ըստ համանման ապրանքներով գործարքի արժեքի մեթոդը (3-րդ մեթոդ)՝ Օրենսգրքի 42-րդ հոդվածին համապատասխան, կամ պահուստային մեթոդը (6-րդ մեթոդ)՝ Օրենսգրքի 45-րդ հոդվածին համապատասխան՝ 2-րդ մեթոդի կամ 3-րդ մեթոդի հիման վրա:

նվազեցման մեթոդը (4-րդ մեթոդ)՝ Օրենսգրքի 43-րդ հոդվածին համապատասխան, կամ 6-րդ մեթոդը՝ մեթոդ 4-ի հիման վրա:

գումարման մեթոդը (5-րդ մեթոդ)՝ Օրենսգրքի 44-րդ հոդվածին համապատասխան, կամ 6-րդ մեթոդը՝ 5-րդ մեթոդի հիման վրա:

6-րդ մեթոդը՝ 1-ին մեթոդի հիման վրա:

4. ՄԱՀ-ի լրացման ժամանակ կիրառվում են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) նորմատիվ տեղեկատվական տեղեկությունների միասնական համակարգի ռեսուրսների կազմի մեջ մտնող տեղեկատուներն ու դասակարգիչները, ինչպես նաեւ Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) օրենսդրությանը համապատասխան ձեւավորվող եւ կիրառման ենթակա՝ մաքսային նպատակներով օգտագործվող տեղեկատուներն ու դասակարգիչները:

5. Սույն կարգի նպատակներով «վանդակ», «բաժին», «ենթաբաժին» ասելով պետք է հասկանալ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի կառուցվածքի վավերապայմանը (վավերապայմանները) կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի ձեւի կառուցվածքային միավորը, որը կարող է ներառել դաշտեր եւ տողեր: Սույն կարգին համապատասխան՝ մեկ վանդակում նշվում են ըստ մեկ հատկանիշի միավորված տեղեկությունները:

Սույն կարգի նպատակներով «ներմուծվող ապրանքներ» ասելով պետք է հասկանալ այն ապրանքները, որոնց մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկությունները սույն կարգին համապատասխան ենթակա են նշան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 160 որոշմամբ նախատեսված դեպքերում ՄԱՀ-ը լրացնելիս:

6. Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ը կարող է պարունակել ավտոմատացված մշակման համար անհրաժեշտ տեխնիկական բնույթի տեղեկություններ: Այդպիսի տեղեկությունները ձեւավորվում են տեղեկատվական համակարգի կողմից: Նշված տեղեկությունների կազմը որոշվում է ՄԱՀ-ի կառուցվածքում:

Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի թղթային պատճենը տպելիս տեխնիկական բնույթի տեղեկությունները չեն արտացոլվում:

7. Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ը լրացվում է տպող սարքերի օգտագործմամբ՝ 2 օրինակից՝ A4 ձեւաչափի թղթի թերթերի վրա: Մեկ օրինակը նախատեսված է մաքսային մարմնի համար, իսկ երկրորդը՝ ՄԱՀ-ը լրացրած անձի համար:

8. Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ը կազմված է 2 հիմնական եւ անհրաժեշտ թվով լրացուցիչ թերթերից: ՄԱՀ-ի առաջին հիմնական թերթը պարունակում է տեղեկություններ ներմուծվող բոլոր այն ապրանքների վերաբերյալ, որոնց մասով լրացվում է տվյալ ՄԱՀ-ը, ՄԱՀ-ի երկրորդ հիմնական թերթի վրա նշվում են ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկություններն ու ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի մեծության հաշվարկը:

Եթե թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ապրանքների մեկ հայտարարագրում հայտարարագրվում են 3-ից ավելի անուն ապրանքներ, ապա ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկությունների

հայտագրման համար օգտագործվում են թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի լրացուցիչ թերթեր: Այս դեպքում որպես լրացուցիչ թերթեր օգտագործվում է թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի երկրորդ հիմնական թերթի ձեւը:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի բոլոր թերթերը՝ երրորդից սկսած, լրացուցիչ են (1-ին եւ 2-րդ թերթերը ձեւի հիմնական թերթերն են, 3-րդ եւ հաջորդող թերթերը՝ լրացուցիչ):

9. ՄԱՀ-ի լրացման ժամանակ արժեքային եւ քանակական մեծությունները կլորացվում են մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո մինչեւ 2 նիշ ճշտությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ՄԱՀ-ում ազգային արժույթով նշվող արժեքային մեծությունները կլորացվում են մինչեւ ամբողջ թիվը:

10. Այն դեպքում, երբ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի վանդակներում տեղեկություններ նշելու համար բավարար տեղ չկա, այդ տեղեկությունները նշվում են ՄԱՀ-ի դարձերեսին կամ ՄԱՀ-ին լրացուցիչ կցվող թերթերի վրա (A4 ձեւաչափի թղթի վրա), որոնք թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի անբաժանելի մասն են կազմում (այսուհետ՝ լրացում): Ընդ որում, թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի համապատասխան վանդակում կատարվում է «Տե՛ս դարձերեսը» կամ «Տե՛ս լրացումը» գրառումը: Լրացման բոլոր թերթերը պետք է համարակալված լինեն:

Լրացման յուրաքանչյուր թերթի վերին աջ անկյունում կատարվում է «Թիվ _____ ՄԱՀ-ի լրացում _____ թ. վրա» գրառումը:

ՄԱՀ-ի դարձերեսը կամ լրացումն օգտագործելիս նշվում է ապրանքների հայտարարագրի 32-րդ վանդակի առաջին ենթաբաժնում նշված՝ ապրանքի հերթական համարը՝ «Ապրանք թիվ _____» գրառման տեսքով, եւ յուրաքանչյուր ապրանքի համար՝ ՄԱՀ-ի վանդակի համարը եւ այն տեղեկությունները, որոնք նշելու համար ՄԱՀ-ի վանդակում բավարար տեղ չկա:

Նշված տեղեկությունները հաստատվում են ՄԱՀ-ը լրացրած անձի ստորագրությամբ եւ հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքի դրոշմվածքով, եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչը պետք է ունենա կնիք:

Յուրաքանչյուր լրացման օրինակների թիվը պետք է համապատասխանի թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-ի օրինակների թվին:

II. ՄԱՀ-1-ի լրացման կարգը

11. 1-ին վանդակը լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում են տեղեկություններ՝ ներմուծվող ապրանքների վաճառող հանդիսացող անձի վերաբերյալ:

Վանդակը լրացվում է ապրանքների հայտարարագրի «Ուղարկող/Արտահանող» 2-րդ վանդակի լրացման կարգին համապատասխան, որը սահմանված է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգի (այսուհետ՝ Հրահանգ) II բաժնով:

12. 2-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով՝

«Ա» բաժնում նշվում են տեղեկություններ՝ ներմուծվող ապրանքների գնորդ հանդիսացող անձի վերաբերյալ:

«Ա» բաժինը լրացվում է ապրանքների հայտարարագրի՝ «Ստացող» 8-րդ վանդակի լրացման կարգին համապատասխան, որը սահմանված է Հրահանգի II բաժնով:

«Բ» բաժնում նշվում են տեղեկություններ՝ ապրանքների հայտարարատու հանդիսացող անձի վերաբերյալ:

«Բ» բաժինը լրացվում է ապրանքների հայտարարագրի՝ «Հայտարարատու» 14-րդ վանդակի լրացման կարգին համապատասխան, որը սահմանված է Հրահանգի II բաժնով:

13. 3-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով՝

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ վանդակում բացատի նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում է ապրանքների մատակարարման պայմանների ծածկագիրը՝ մատակարարման պայմանների դասակարգչին համապատասխան, եւ աշխարհագրական կետի անվանումը:

Եթե ներմուծվող ապրանքներին վերաբերող՝ մատակարարման բազիսային պայմանները տարբեր են, կամ եթե մատակարարման բազիսային պայմանը վերաբերում է բոլոր ներմուծվող ապրանքներին, բայց միեւնույն ժամանակ մատակարարումն իրականացվում է տարբեր աշխարհագրական կետեր, ապա վանդակում կատարվում է «Տարբեր» գրառումը:

14. 4-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով՝

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ վանդակում բացատի նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են վաճառողի կողմից գնորդին ներկայացված եւ ներմուծվող ապրանքների արժեքային գնահատականը պարունակող հաշվի (հաշիվների) համարը (համարները) եւ ամսաթիվը (ամսաթվերը)՝ օօ.աա.տտտտ (օրը, ամիսը, օրացուցային տարին) ձեւաչափով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները նշվում են նոր տողից:

15. 5-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով՝

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ վանդակում բացատի նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են ներմուծվող ապրանքների առքուվաճառքի պայմանագրի (համաձայնագրի) համարը եւ

ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օրը, ամիսը, օրացուցային տարին) ձեւաչափով, ինչպես նաեւ դրա գործող հավելվածների, լրացումների եւ փոփոխությունների համարներն ու ամսաթվերը:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները նշվում են նոր տողից:

16. 6-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակը լրացվում է 7-րդ վանդակի «գ» բաժնում, 8-րդ վանդակի «բ» բաժնում, 9-րդ վանդակի «ա» եւ (կամ) «բ» բաժիններում «Այո» պատասխանի դեպքում:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ի վանդակում՝ բացատի նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են 7-9-րդ վանդակներում նշված տեղեկություններին վերաբերող փաստաթղթերի համարները եւ ամսաթվերը՝ օօ.աա.տտտտ (օրը, ամիսը, օրացուցային տարին) ձեւաչափով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները նշվում են նոր տողից:

17. 7-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով՝

«Ա», «բ» եւ «գ» բաժիններում՝ ճիշտ պատասխանին համապատասխանող դաշտերում դրվում է «X» նշանը:

«Ա» բաժնում «Ոչ» պատասխանի դեպքում «բ» եւ «գ» բաժինները չեն լրացվում:

«Գ» բաժնում «Այո» պատասխանի դեպքում «Լրացուցիչ տվյալներ» վանդակում նշվում են տեղեկություններ՝ սույն կարգի 39-րդ կետի երրորդ եւ հինգերորդ պարբերություններին համապատասխան:

18. 8-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով՝

«Ա» եւ «Բ» բաժիններում՝ ճիշտ պատասխանին համապատասխանող դաշտերում դրվում է «X» նշանը:

Եթե ներմուծվող ապրանքների վաճառքը կամ դրանց գինը կախված է այնպիսի պայմաններից կամ պարտավորություններից, որոնց ազդեցությունը ներմուծվող ապրանքների գնի վրա կարող է քանակապես որոշվել, ապա համապատասխան գումարը նշվում է 11-րդ վանդակի «Բ» բաժնում՝ որպես անուղղակի վճարում:

19. 9-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով՝

«Ա» եւ «Բ» բաժիններում՝ ճիշտ պատասխանին համապատասխանող դաշտերում դրվում է «X» նշանը:

«Ա» եւ (կամ) «Բ» բաժիններում «Այո» պատասխանի դեպքում 15-րդ եւ 16-րդ վանդակներում նշվում են համապատասխան մեծությունները:

20. 10-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով՝

«Ա» բաժնում նշվում է ՄԱՀ-1-ի լրացուցիչ թերթերի թիվը (լրացուցիչ թերթերի թիվը համապատասխանում է ՄԱՀ-1-ի վերջին թերթի համարին՝ փոքրացված 2-ով):

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ «Բ» բաժնում առանձին տողերով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են՝

ՄԱՀ-1-ի լրացման ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օրը, ամիսը, օրացուցային տարին) ձեւաչափով.

ՄԱՀ-1-ը լրացրած անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

այն երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, որի լիազորված մարմինը տրամադրել է ՄԱՀ-1-ը լրացրած

անձի՝ անձը հաստատող փաստաթուղթը, ՄԱՀ-1-ը լրացրած անձի՝ անձը հաստատող փաստաթղթի անվանումը, սերիան (առկայության դեպքում), համարը եւ տրման ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օրը, ամիսը, օրացուցային տարին) ձեւաչափով.

ՄԱՀ-1-ը լրացրած անձի կոնտակտային վավերապայմանները՝ կապի տեսակի անվանումը (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ եւ այլն), կապուղու նույնականացուցիչը (հեռախոսի, ֆաքսի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն եւ այլն).

ՄԱՀ-1-ը լրացրած անձի՝ հայտարարատուի անձնակազմում զբաղեցրած պաշտոնը, եթե մաքսային հայտարարագրումը կատարվում է հայտարարատուի կողմից, կամ այդ անձի՝ մաքսային ներկայացուցչի անձնակազմում զբաղեցրած պաշտոնը, եթե մաքսային հայտարարագրումը կատարվում է մաքսային ներկայացուցչի կողմից:

Եթե ՄԱՀ-1-ը լրացվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից, ապա սույն կետի վեցից ութերորդ պարբերություններում նշված տեղեկությունները չեն նշվում:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում հայտագրված տեղեկությունները հաստատվում են «բ» բաժնում ՄԱՀ-1-ը լրացրած անձի ստորագրությունը եւ հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքի դրոշմվածքը դնելու միջոցով, եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչը պետք է ունենա կնիք, իսկ եթե ՄԱՀ-1-ը լրացվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը եւ նրա անձնական համարակալված կնիքի դրոշմվածքը դնելու միջոցով:

21. «Ապրանք թիվ» վանդակը լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում է ապրանքի հերթական համարը, որը նշված է ապրանքների հայտարարագրի «Ապրանք» 32-րդ վանդակում:

22. «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում առանց բացատների նշվում է ներմուծվող ապրանքի տասանիշ ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) համապատասխան:

23. 11-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

«Ա» բաժնի առաջին ենթաբաժնում նշվում է ներմուծվող ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը հաշվի արժույթով:

«Ա» բաժնի երկրորդ ենթաբաժնում նշվում է ներմուծվող ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը՝ վերահաշվարկված այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը: Վերահաշվարկը կատարվում է այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող (որոշվող)՝ ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, իսկ ներմուծվող այն ապրանքների մասով, որոնց բացթողումը կատարվել է նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացնելը, նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացնելը՝ ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Հաշվի արժույթի տառային ծածկագիրը՝ արժույթների դասակարգչին համապատասխան, եւ անդամ պետության արժույթի նկատմամբ հաշվի արժույթի փոխարժեքը նշվում են թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ «ա» բաժնի երկրորդ ենթաբաժնի անվանման մեջ՝ «(վերահաշվարկի փոխարժեքը _____)» դաշտում, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում: Նշված դաշտը (ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմանները) չի լրացվում ներմուծվող այն ապրանքների մասով, որոնց բացթողումը կատարվել է նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացնելը՝ մի քանի դիմումների

հիման վրա, եթե այդ դիմումները մաքսային մարմնի կողմից գրանցվել են տարբեր օրերին, եւ (կամ) ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված եւ (կամ) վճարման ենթակա գինը հաշիվներում նշված է տարբեր արժույթներով: Այդ ապրանքների մասով հաշվի արժույթի տառային ծածկագրի եւ անդամ պետության արժույթի նկատմամբ հաշվի արժույթի փոխարժեքի վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ապրանքի մասով նշվում են թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ «ա» բաժնի երկրորդ ենթաբաժնում առանձին տողով՝ ներմուծվող ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի վերաբերյալ տեղեկություններից ներքեւ, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում: Հաշվի արժույթի տառային ծածկագրի եւ անդամ պետության արժույթի նկատմամբ հաշվի արժույթի փոխարժեքի վերաբերյալ տեղեկությունները թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում նշվում են «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի համապատասխան վավերապայմաններում:

«Բ» բաժնում նշվում է անուղղակի վճարումների մեծությունը, այդ թվում՝ Ց-րդ վանդակի «բ» բաժնում նշված այն պայմանների կամ պարտավորությունների արժեքային գնահատականի մեծությունը, որոնց ազդեցությունը ներմուծվող ապրանքների գնի վրա կարող է քանակապես որոշվել վերահաշվարկված այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը: Վերահաշվարկը կատարվում է այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող (որոշվող)՝ ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, իսկ ներմուծվող այն ապրանքների մասով, որոնց բացթողումը կատարվել է նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը բացթողման մասին դիմումի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Անուղղակի վճարումների արժույթի տառային ծածկագիրը՝ արժույթների դասակարգչին համապատասխան, եւ անդամ պետության արժույթի նկատմամբ

անուղղակի վճարումների արժույթի փոխարժեքը նշվում են թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ «բ» բաժնի անվանման մեջ՝ «(վերահաշվարկի փոխարժեքը _____)» դաշտում, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում: Նշված դաշտը (ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմանները) չի լրացվում ներմուծվող այն ապրանքների մասով, որոնց բացթողումը կատարվել է նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մի քանի դիմումների հիման վրա, եթե այդ դիմումները մաքսային մարմնի կողմից գրանցվել են տարբեր օրերին, եւ (կամ) ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված եւ (կամ) վճարման ենթակա գինը հաշիվներում նշված է տարբեր արժույթներով: Այդ ապրանքների մասով անուղղակի վճարումների արժույթի տառային ծածկագրի եւ անուղղակի վճարումների արժույթի փոխարժեքի վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ապրանքի մասով նշվում են թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ «բ» բաժնում առանձին տողով՝ անուղղակի վճարումների մեծության վերաբերյալ տեղեկություններից ներքեւ, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում: Անուղղակի վճարումների արժույթի տառային ծածկագրի եւ անուղղակի վճարումների արժույթի փոխարժեքի վերաբերյալ տեղեկությունները թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում նշվում են «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի համապատասխան վավերապայմաններում:

Այն դեպքում, երբ «բ» բաժնում նշված է անուղղակի վճարումների ընդհանուր մեծությունը, ընդհանուր մեծության վերծանումը կատարվում է ՄԱՀ-1-ի համապատասխան թերթի «Լրացուցիչ տվյալներ» վանդակում:

24. 12-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է 11-րդ վանդակի «ա» բաժնի երկրորդ ենթաբաժնում եւ «բ» բաժնում նշված մեծությունների գումարն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

25. 13-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը, նշվում է ծախսերի մեծությունն այն չափով, որով դրանք իրականացվել կամ ենթակա են իրականացման գնորդի կողմից, սակայն ներառված չեն ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ, որը նշված է 11-րդ վանդակի «ա» բաժնում:

«Ա» բաժնում նշվում է գործակալների (միջնորդների) վարձատրության եւ բրոքերների վարձատրության հետ կապված՝ գնորդի ծախսերի մեծությունը՝ բացառությամբ գնման համար այն վարձատրության, որը գնորդը վճարում է իր գործակալին (միջնորդին)՝ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս, ըստ նրա ներկայացման, ներմուծվող ապրանքների գնման հետ կապված ծառայությունների մատուցման համար:

«Բ» բաժնում նշվում է տարայի հետ կապված գնորդի ծախսերի գումարային մեծությունը, եթե մաքսային նպատակների համար այդ տարան ներմուծվող ապրանքների հետ դիտվում է որպես մեկ ամբողջություն, եւ փաթեթվածքի հետ կապված ծախսերի գումարային մեծությունը, այդ թվում՝ փաթեթավորման նյութերի եւ փաթեթավորման աշխատանքների արժեքը:

26. 14-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը, նշվում է այն ապրանքների եւ ծառայությունների բաշխված արժեքը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն գնորդին են տրամադրվել անվճար կամ իջեցված գնով՝ ներմուծվող ապրանքների արտադրության եւ վաճառքի նպատակով օգտագործելու համար՝ այդ ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ չներառված չափով:

«Ա» բաժնում նշվում է այն հումքի, նյութերի, դետալների, կիսաֆաբրիկատների եւ այլ ապրանքների արժեքը, որոնցից արտադրված (բաղկացած) են ներմուծվող ապրանքները:

«Բ» բաժնում նշվում է այն գործիքների, դրոշմների, կադապարների եւ նմանատիպ այլ առարկաների արժեքը, որոնք օգտագործվել են ներմուծվող ապրանքների արտադրության ժամանակ:

«Գ» բաժնում նշվում է ներմուծվող ապրանքների արտադրության ժամանակ սպառված նյութերի արժեքը:

«Դ» բաժնում նշվում է Միության մաքսային տարածքից դուրս կատարված եւ ներմուծվող ապրանքների արտադրության համար անհրաժեշտ նախագծման, մշակման, ինժեներական, կոնստրուկտորական աշխատանքների, գեղարվեստական ձեւավորման, դիզայնի, էսքիզների եւ գծագրերի արժեքը:

27. 15-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը, նշվում է ներմուծվող ապրանքին վերաբերող մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման համար լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումների մեծությունը, ներառյալ՝ ոռյալթիները, արտոնագրերի, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքների համար կատարվող վճարումները, որոնք նախատեսված են Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետով (այսուհետ սույն կետում՝ լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումներ), կամ լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումների մեծությունն այն դեպքում, երբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի մայիսի 22-ի «Ապրանքների մաքսային արժեքը որոշելիս լրացուցիչ հաշվեգրումների հաշվարկի մասին» թիվ 83 որոշման 1-ին կետի հինգերորդ պարբերությանը համապատասխան՝ լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումների այդ գումարային մեծությունը գումարվում է ներմուծվող ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին: Նշված դեպքում «Լրացուցիչ տեղեկություններ» վանդակում ներմուծվող ապրանքի մասով նշվում են լրացուցիչ տեղեկություններ՝ սույն կարգի 39-րդ կետի երրորդ եւ վեցերորդ պարբերություններին համապատասխան:

Վանդակը չի լրացվում ներմուծվող ապրանքի մասով այն դեպքում, երբ լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումների գումարային մեծությունը գումարվել է այլ ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին, որի նկատմամբ կիրառվում է ներմուծման մաքսատուրքի առավելագույն ադվալորային դրույքաչափը կամ հարկման առավելագույն մակարդակը: Նշված դեպքում «Լրացուցիչ տեղեկություններ» վանդակում ներմուծվող ապրանքի մասով նշվում են լրացուցիչ տեղեկություններ՝ սույն կարգի 39-րդ կետի երրորդ եւ յոթերորդ պարբերություններին համապատասխան:

28. 16-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը, նշվում է ներմուծվող ապրանքների հետագա վաճառքի, այլ եղանակով դրանք տնօրինելու կամ օգտագործելու արդյունքում ստացված եկամտի (հասույթի)՝ վաճառողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հատկացվելիք մասի մեծությունը:

29. 17-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է ներմուծվող ապրանքների՝ մինչեւ Միության մաքսային տարածք այդ ապրանքների ժամանման վայր կամ Հանձնաժողովի կողմից սահմանված այլ վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերի մեծությունն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

17-րդ վանդակի անվանման մեջ նշվում է ներմուծվող ապրանքների՝ Միության մաքսային տարածք ժամանման վայրը կամ Հանձնաժողովի կողմից սահմանված այլ վայր, եւ մինչեւ այդ վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերը գումարվում են ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին, իսկ եթե ներմուծվող ապրանքների՝ մինչեւ Միության մաքսային տարածք այդ ապրանքների ժամանման վայր կամ Հանձնաժողովի կողմից սահմանված այլ վայր, եւ

ժամանման վայրից կամ Հանձնաժողովի կողմից սահմանված այլ վայրից փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերի բաշխումը փաստաթղթերով հաստատված չէ՝ ներմուծվող ապրանքների նշանակման վայրը Միության մաքսային տարածքում:

30. 18-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում նշվում է ներմուծվող ապրանքների բեռնման, բեռնաթափման կամ վերաբեռնման եւ մինչեւ Միության մաքսային տարածք այդ ապրանքների ժամանման վայր կամ Հանձնաժողովի կողմից սահմանված այլ վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հետ կապված այլ գործողությունների կատարման ծախսերի մեծությունն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

31. 19-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում նշվում է 17-րդ եւ 18-րդ վանդակներում նշված գործողությունների հետ կապված ապահովագրական ծախսերի մեծությունն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

32. 20-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում նշվում է 13-19-րդ վանդակներում նշված մեծությունների գումարն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

33. 21-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում մաքսային հայտարարագիրը, նշվում է ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելուց հետո այնպիսի ապրանքների հետ կապված շինարարական, տեղադրման, հավաքման, մոնտաժման, սպասարկման կամ

տեխնիկական աջակցության ցուցաբերման ծախսերը, ինչպիսիք են արդյունաբերական կայանքները, մեքենաները կամ սարքավորումները:

34. 22-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում նշվում է ներմուծվող ապրանքների՝ Միության մաքսային տարածք այդ ապրանքների ժամանման վայրից կամ Հանձնաժողովի կողմից սահմանված այլ վայրից Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերի մեծությունն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

35. 23-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում նշվում է Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման կամ Միության մաքսային տարածքում այդ ապրանքների վաճառքի հետ կապված վճարվող տուրքերի, հարկերի եւ վճարների գումարն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

36. 24-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում նշվում է 21-23-րդ վանդակներում նշված մեծությունների գումարն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

37. 25-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

«Ա» բաժնում նշվում է 12-րդ եւ 20-րդ վանդակներում նշված մեծությունները գումարելու եւ ստացված գումարից 24-րդ վանդակում նշված մեծությունը հանելու միջոցով հաշվարկված՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքն այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը:

«Բ» բաժնում նշվում է ԱՄՆ դոլարով վերահաշվարկված՝ ներմուծվող ապրանքի մաքսային արժեքը, որը նշված է «ա» բաժնում: Վերահաշվարկը

կատարվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող (որոշվող)՝ ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը, իսկ ներմուծվող այն ապրանքների մասով, որոնց բացթողումը կատարվել է նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

ԱՄՆ դոլարի տառային ծածկագիրը՝ արժույթների դասակարգչին համապատասխան, եւ անդամ պետության արժույթի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը նշվում են թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ «բ» բաժնի անվանման մեջ՝ «(վերահաշվարկի փոխարժեքը _____)» դաշտում, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում: Նշված դաշտը (ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմանները) չի լրացվում ներմուծվող այն ապրանքների մասով, որոնց բացթողումը կատարվել է նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մի քանի դիմումների հիման վրա, եթե այդ դիմումները մաքսային մարմնի կողմից գրանցվել են տարբեր օրերի: Այդ ապրանքների մասով ԱՄՆ դոլարի տառային ծածկագրի եւ անդամ պետության արժույթի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ապրանքի մասով նշվում են թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ «բ» բաժնում առանձին տողով՝ ներմուծվող ապրանքի մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններից ներքեւ, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում: ԱՄՆ դոլարի տառային ծածկագրի եւ անդամ պետության արժույթի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի վերաբերյալ տեղեկությունները թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում նշվում են «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի համապատասխան վավերապայմաններում:

38. «*» վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ վանդակում «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են տեղեկություններ առետրային եւ այլ փաստաթղթերում արտարժույթով նշված՝ 13-23-րդ վանդակներում նշման ենթակա մեծություններն այն անդամ պետության արժույթով վերահաշվարկելու մասին, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը՝

ՄԱՀ-1-ում այն ապրանքի հերթական համարը, որին վերաբերում են տեղեկությունները.

ՄԱՀ-1-ի այն վանդակի համարը, որին վերաբերում են տեղեկությունները.

արտարժույթի տառային ծածկագիրը՝ արժույթների դասակարգչին համապատասխան.

գումարն արտարժույթով.

անդամ պետության արժույթի նկատմամբ արտարժույթի՝ ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքը, որը սահմանվում (որոշվում) է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը, իսկ ներմուծվող այն ապրանքների մասով, որոնց բացթողումը կատարվել է նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը բացթողման մասին դիմումի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքը:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ը լրացնելիս ՄԱՀ-1-ի տարբեր ապրանքներին կամ տարբեր վանդակներին վերաբերող տեղեկությունները նշվում են առանձին տողերով՝ յուրաքանչյուր ապրանքի կամ յուրաքանչյուր վանդակի համար:

39. «Լրացուցիչ տեղեկություններ» վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ վանդակում «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում՝ ՄԱՀ-1-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են՝

ՄԱՀ-1-ում այն ապրանքի հերթական համարը, որին վերաբերում են լրացուցիչ տեղեկությունները կամ հաշվարկները՝ բացառությամբ այն դեպքի, երբ լրացուցիչ տեղեկությունները վերաբերում են բոլոր այն ապրանքներին, որոնց մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկությունները հայտագրվում են ՄԱՀ-ում.

հետևյալ լրացուցիչ տեղեկությունները՝

Օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ստուգիչ մեծությունների թվից օգտագործվող ստուգիչ մեծության վերաբերյալ՝ համապատասխան գրառման տեսքով (օրինակ՝ «Ներմուծվող ապրանքներով գործարքի արժեքը մոտ է նույնական ապրանքներով գործարքի արժեքին»)՝ սույն կարգի 17-րդ կետով նախատեսված դեպքում.

լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումների գումարային մեծությունը ներմուծվող այն ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին գումարելու վերաբերյալ, որի նկատմամբ կիրառվում է ներմուծվող մաքսատուրքի առավելագույն ադվալորային դրույքաչափը կամ հարկման առավելագույն մակարդակը՝ «Լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումների գումարային մեծությունը գումարվել է ներմուծվող ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին» գրառման տեսքով՝ սույն կարգի 27-րդ կետով նախատեսված դեպքում.

լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումների մեծությունը ներմուծվող ապրանքի մաքսային արժեքում չներառելու վերաբերյալ (նշելով այն ապրանքի անվանումը, որի մաքսային արժեքում ներառված է այդ վճարումների գումարային մեծությունը, ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որտեղ հայտագրվել են այդպիսի ապրանքի վերաբերյալ տեղեկությունները, եւ

ապրանքների նշված հայտարարագրի մեջ այդ ապրանքի հերթական համարը՝ «Լիցենզիոն եւ նմանատիպ այլ վճարումները (արտոնագրերի, ապրանքային նշանների համար կատարվող վճարումները եւ այլն) ներառված չեն ապրանքի մաքսային արժեքում՝ այդ վճարումների գումարային մեծությունը _____ ԱՀ թիվ _____ ապրանքի թիվ ___ ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին գումարելու հետ կապված» գրառման տեսքով՝ սույն կարգի 27-րդ կետով նախատեսված դեպքում.

ներմուծվող ապրանքի մաքսային արժեքի վերաբերյալ այլ լրացուցիչ տեղեկություններ կամ հաշվարկներ (անհրաժեշտության դեպքում):

40. «Ամսաթիվ, ստորագրություն, կնիք» վանդակը լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում նշվում է ՄԱՀ-1-ի լրացման ամսաթիվը՝ օօ.աա.տտտտ (օրը, ամիսը, օրացուցային տարին) ձեւաչափով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-1-ում հայտագրված տեղեկությունները հաստատվում են վանդակում ՄԱՀ-1-ը լրացրած անձի ստորագրությունը եւ հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքի դրոշմվածքը դնելու միջոցով, եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչը պետք է ունենա կնիք, իսկ եթե ՄԱՀ-1-ը լրացվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը եւ նրա անձնական համարակալված կնիքի դրոշմվածքը դնելու միջոցով:

41. «Մաքսային մարմնի նշումների համար» վանդակը լրացվում է հետեւյալ կարգով՝

Վանդակում մաքսային մարմնի պաշտոնատար անձը նշում է ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որտեղ հայտագրված են ներմուծվող ապրանքների վերաբերյալ տեղեկությունները, իսկ ապրանքների հայտարարագրում հայտագրված՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի

վերաբերյալ տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու դեպքում՝ ապրանքների հայտարարագրի ճշգրտման գրանցման համարը:

III. ՄԱՀ-2-ի լրացման կարգը

1. ՄԱՀ-2-ի լրացման կարգն ապրանքների մաքսային արժեքը

2-6-րդ մեթոդներով որոշելու դեպքում

42. 1-ին վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում նշվում են տեղեկություններ այն գործարքի կողմ հանդիսացող օտարերկրյա անձի մասին, որին համապատասխան ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք, իսկ միակողմ գործարքի շրջանակներում ապրանքների ներմուծման դեպքում՝ այդ ապրանքներն ուղարկողի մասին տեղեկություններ:

Վանդակը լրացվում է ապրանքների հայտարարագրի՝ «Ուղարկող/Արտահանող» 2-րդ վանդակի լրացման կարգին համապատասխան, որը սահմանված է Հրահանգի II բաժնով:

43. 2-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

«Ա» բաժնում նշվում են տեղեկություններ այն գործարքի կողմ հանդիսացող՝ անդամ պետության անձի մասին, որին համապատասխան ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք, իսկ միակողմ գործարքի շրջանակներում ապրանքների ներմուծման դեպքում՝ այդ ապրանքները ստացողի մասին տեղեկություններ:

«Ա» բաժինը լրացվում է ապրանքների հայտարարագրի՝ «Ստացող» 8-րդ վանդակի լրացման կարգին համապատասխան, որը սահմանված է Հրահանգի II բաժնով:

«Բ» բաժնում նշվում են տեղեկություններ՝ ներմուծվող ապրանքների հայտարարատու հանդիսացող անձի վերաբերյալ:

«Բ» բաժինը լրացվում է ապրանքների հայտարարագրի՝ «Հայտարարատու» 14-րդ վանդակի լրացման կարգին համապատասխան, որը սահմանված է Հրահանգի II բաժնով:

44. 3-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ի վանդակում՝ բացատի նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ ՄԱՀ-2-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում է ներմուծվող ապրանքների մատակարարման պայմանների ծածկագիրը՝ մատակարարման պայմանների դասակարգչին համապատասխան, եւ աշխարհագրական կետի անվանումը:

Եթե ներմուծվող ապրանքներին վերաբերող՝ մատակարարման բազիսային պայմանները տարբեր են, կամ եթե մատակարարման բազիսային պայմանը վերաբերում է բոլոր ներմուծվող ապրանքներին, բայց միեւնոյն ժամանակ մատակարարումն իրականացվում է տարբեր աշխարհագրական կետեր, ապա վանդակում կատարվում է «Տարբեր» գրառումը:

45. 4-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ի վանդակում՝ բացատի նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ ՄԱՀ-2-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են այն փաստաթղթի համարները եւ ամսաթվերը՝ օօ.աա.տտտտ (օր, ամիս, օրացուցային տարի) ձեւաչափով, որով հաստատվում է այն գործարքի կատարումը, որի կողմերից մեկն օտարերկրյա անձ է, եւ որի հիման վրա ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք, ինչպես նաեւ դրա հավելվածների, լրացումների եւ փոփոխությունների համարները եւ ամսաթվերը, իսկ այդ գործարքի բացակայության դեպքում՝ ներմուծվող ապրանքների

տնօրինման, օգտագործման եւ (կամ) տիրապետման իրավունքը հաստատող այլ փաստաթղթի համարները եւ ամսաթվերը:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները նշվում են նոր տողից:

46. 5-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ի վանդակում՝ բացատի նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ ՄԱՀ-2-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում օօ.աա.տտտտ (օր, ամիս, օրացուցային տարի) ձեւաչափով նշվում են փաստաթղթերի համարները եւ ամսաթվերը՝ օտարերկրյա անձին որպես կողմերից մեկը ներառող եւ ապրանքների՝ Միության մաքսային տարածք ներմուծման համար հիմք հանդիսացած գործարքի կատարումը հաստատող մեկ փաստաթղթի շրջանակներում, իսկ այդ գործարքի բացակայության դեպքում՝ այդ ապրանքների տնօրինման, օգտագործման եւ (կամ) տիրապետման իրավունքը հաստատող այլ փաստաթղթի շրջանակներում ավելի վաղ ներմուծված ապրանքների մաքսային արժեքի մաքսային հսկողության արդյունքներով մաքսային մարմինների կողմից ընդունված որոշումների, կամ դատական մարմինների՝ այդ ապրանքների վերաբերյալ որոշումների հետ:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները նշվում են նոր տողից:

Վանդակում չեն նշվում 8-րդ վանդակում նշման ենթակա փաստաթղթերը:

47. 6-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար կիրառվող մեթոդին համապատասխանող դաշտում դրվում է «X» նշանը:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը 1-ին մեթոդի հիման վրա 6-րդ մեթոդով որոշելիս կատարվում է նշում միայն «q» դաշտում:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը 2-5-րդ մեթոդների հիման վրա 6-րդ մեթոդով որոշելիս կատարվում են նշումներ «ե» դաշտում եւ այն դաշտում, որը համապատասխանում է 2-5-րդ մեթոդներից մեկին:

Եթե ՄԱՀ-2-ի «Ապրանք թիվ» վանդակներում տարբեր համարների ներքո նշված ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար օգտագործվում են ապրանքների մաքսային արժեքի որոշման տարբեր մեթոդներ, ապա կատարվում է նշում «է» դաշտում:

48. 7-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է այն պատճառների հակիրճ հիմնավորումը, որոնց հետ կապված՝ կիրառելի չեն ապրանքների մաքսային արժեքի որոշման այն մեթոդները, որոնք նախորդում են 6-րդ վանդակում նշված՝ ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդին.

1-ին մեթոդի համար՝ կատարվում է «1-ին մեթոդը կիրառելի չէ՝ կապված» գրառումը, եւ նշվում են 1-ին մեթոդի կիրառման անհնարինության պատճառներն Օրենսգրքի եւ (կամ) Միության մարմինների ակտերի այն դրույթների հղումներով, որոնց համապատասխան դրա կիրառումը հնարավոր չէ:

2-5-րդ մեթոդների համար՝ կատարվում է « __ մեթոդը կիրառելի չէ՝ կապված» գրառումը, եւ նշվում են 6-րդ վանդակում նշված՝ ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդին նախորդող՝ ապրանքների մաքսային արժեքի որոշման յուրաքանչյուր մեթոդի կիրառման անհնարինության պատճառները կոնկրետ այն փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների բացակայության նշմամբ, որոնց բացակայության հետ կապված՝ այդ մեթոդների կիրառումը հնարավոր չէ.

6-րդ մեթոդի համար՝ կատարվում է «6-րդ մեթոդը __ մեթոդի ճկուն կիրառմամբ կիրառելի չէ՝ կապված» գրառումը, եւ նշվում են ապրանքների մաքսային արժեքի որոշման յուրաքանչյուր մեթոդի կիրառման անհնարինության պատճառները՝ հաշվի առնելով 6-րդ մեթոդի շրջանակներում դրանց կիրառման

հերթականությունը կոնկրետ այն փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների բացակայության նշմամբ, որոնց բացակայության հետ կապված՝ այդ մեթոդների կիրառումը հնարավոր չէ:

49. 8-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում են տեղեկություններ այն փաստաթղթերի մասին, որոնց հիման վրա լրացվել է ՄԱՀ-2-ը:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը 2-րդ մեթոդով, 3-րդ մեթոդով եւ 6-րդ մեթոդով դրանց հիման վրա որոշելիս թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ ՄԱՀ-2-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են՝

ՄԱՀ-2-ում այն ապրանքի հերթական համարը, որին վերաբերում են տեղեկությունները.

ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան նույնական կամ համանման ապրանքը ձեւակերպվել է մաքսային ընթացակարգով, եւ այդ ապրանքի հերթական համարն ապրանքների այդ հայտարարագրի 32-րդ վանդակից:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը 4-րդ մեթոդով եւ 6-րդ մեթոդով 4-րդ մեթոդի հիման վրա որոշելիս թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ ՄԱՀ-2-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են՝

ՄԱՀ-2-ում այն ապրանքի հերթական համարը, որին վերաբերում են տեղեկությունները.

այն փաստաթղթերի օօ.աա.տտտտ (օրը, ամիսը, օրացուցային տարին) ձեւաչափով համարները եւ ամսաթվերը, որոնք պարունակում են

տեղեկություններ՝ ավելի վաղ ներմուծված նույնական, համանման կամ ներմուծվող ապրանքի գնի մասին, որով այդ ապրանքներն ամենամեծ հանրագումարային քանակությամբ վաճառվում են Միության մաքսային տարածքում:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը 5-րդ մեթոդով, 6-րդ մեթոդով՝ 5-րդ մեթոդի հիման վրա, եւ 6-րդ մեթոդով՝ 1-ին մեթոդի հիման վրա որոշելիս թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ ՄԱՀ-2-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են՝

ՄԱՀ-2-ում այն ապրանքի հերթական համարը, որին վերաբերում են տեղեկությունները.

այն փաստաթղթերի օօ.աա.տտտտ (օրը, ամիսը, օրացուցային տարին) ձեւաչափով համարները եւ ամսաթվերը, որոնցից տեղեկություններն օգտագործվել են ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սահմանելիս:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները նշվում են նոր տողից:

50. 9-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է ՄԱՀ-2-ի լրացուցիչ թերթերի քանակը (լրացուցիչ թերթերի քանակը համապատասխանում է ՄԱՀ-2-ի վերջին թերթի համապատասխան համարին՝ փոքրացված 2-ով):

51. 10-րդ վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակը լրացվում է ՄԱՀ-1-ի 10-րդ վանդակի «բ» բաժնի լրացման համար նախատեսված կարգով:

52. «Ապրանք թիվ» վանդակը լրացվում է հետեւյալ կարգով:

Վանդակում նշվում է ապրանքի հերթական համարը, որը նշված է ապրանքների հայտարարագրի «Ապրանքը» 32-րդ վանդակում:

53. «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում առանց բացատների նշվում է ներմուծվող ծածկագրի տասանիշ ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան:

54. «Լրացուցիչ տեղեկություններ» վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում անհրաժեշտության դեպքում նշվում են ՄԱՀ-2-ում նշված տեղեկություններին վերաբերող ցանկացած լրացուցիչ տեղեկություններ կամ հաշվարկներ:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2 վանդակում՝ «/» բաժանման նշանով, իսկ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում՝ ՄԱՀ-2-ի կառուցվածքի համապատասխան վավերապայմաններում նշվում են՝

ՄԱՀ-2-ում այն ապրանքի հերթական համարը, որին վերաբերում են տեղեկությունները կամ հաշվարկները՝ բացառությամբ այն դեպքի, երբ լրացուցիչ տեղեկությունները կամ հաշվարկները վերաբերում են բոլոր այն ապրանքներին, որոնց մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկությունները հայտագրվում են ՄԱՀ-ում.

ցանկացած լրացուցիչ տեղեկություններ կամ հաշվարկներ, որոնք վերաբերում են ՄԱՀ-ում նշվող տեղեկություններին:

55. «Ամսաթիվ, ստորագրություն, կնիք» վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում նշվում է ՄԱՀ-2-ի լրացման ամսաթիվը՝ օօ.աա.տտտտտ (օր/ամիս/օրացուցային տարի) ձեւաչափով:

Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ՄԱՀ-2-ում հայտագրված տեղեկությունները հաստատվում են վանդակում ՄԱՀ-2-ը լրացրած անձի ստորագրությունը կամ հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքի դրոշմվածքը դնելով, եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչը պետք է ունենա կնիք, իսկ եթե ՄԱՀ-2-ը լրացվում է մաքսային մարմնի պաշտոնատար

անձի կողմից՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը կամ նրա անձնական համարակալված կնիքի դրոշմվածքը դնելու միջոցով:

56. «Մաքսային մարմնի նշումների համար» վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից նշվում է ապրանքների այն հայտարարագրի գրանցման համարը, որում հայտագրված են ներմուծվող ապրանքների վերաբերյալ տեղեկությունները, իսկ ապրանքների հայտարարագրում հայտագրված՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու դեպքում՝ ապրանքների հայտարարագրի ճշգրտման գրանցման համարը:

**2. ՄԱՀ-2-ի լրացման կարգն ապրանքների մաքսային արժեքը
2-րդ մեթոդով, 3-րդ մեթոդով եւ 6-րդ մեթոդով
դրանց հիման վրա որոշելու դեպքում**

57. 11-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

Վանդակում այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը, նշվում է նույնական կամ համանման ապրանքներով գործարքի այն արժեքը, որն ընդունվում է որպես ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար հիմք՝ Օրենսգրքի 41-րդ, 42-րդ կամ 45-րդ հոդվածներին համապատասխան:

58. 12-րդ վանդակը լրացվում է հետևյալ կարգով:

«Ա»-«Ե» բաժինները լրացվում են Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին կամ 42-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքի ճշգրտում իրականացնելիս այն դեպքում, երբ «ա»-«ե» բաժիններով նախատեսված նույնական կամ համանման ապրանքների մասով ցանկացած ծախս գերազանցում է ներմուծվող ապրանքների մասով նույնանման ծախսերը:

«Ա» բաժնում այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը, նշվում է այն մեծությունը, որով պետք է նվազեցվի 11-րդ վանդակում նշված՝ նույնական կամ համանման ապրանքներով գործարքի արժեքը՝ կապված այն բանի հետ, որ պայմանագրին համապատասխան նույնական կամ համանման ապրանքի միավորի գինը կախված է ապրանքի վաճառված միավորների քանակից, եւ ներմուծվող ապրանքներն ու նույնական կամ համանման ապրանքները վաճառվել են այն քանակներով, որոնք համապատասխանում են ապրանքի միավորի գների տարբեր մակարդակներին:

«Ա» բաժինը չի լրացվում հետեյալ դեպքերում:

